№ 23 Հինգշաբթի Փետրվարի 27 — 1886 — Հինգշաբթի Փետրվարի 27 № 23

ՏԱՍՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшака».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր գիւղացիների աղքատութիւնը։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Մի առաջարկութիւն։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Համաշխարհային հանդէս։ Արտաքին լուրեր։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Շավշէթ-Իմէրխեվ։

ՄԵՐ ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻ ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆԸ

—

Անհերքելի իրողութիւն է որ մեր գիւղացիների մէջ, մանաւանդ մեր երկրի բարձրաւանդակ, խիստ ձմեռ ունեցող, կամ վատ հողեր, հողերի պակասութիւն ու խիստ աղքատաբնակութիւն ունեցող տեղերում տիրում է աղքատութիւնը։ Բայց հարցը դրանումն է թէ ինչ միջոցներ պէտք է գործադրել այդ աղքատութեանն առաջն առնելու համար։

Պ. Տէր-Պետրոսեան կովկասեան գիւղատնտեսական ընկերութեանը այդ հարցի վերաբերութեամբ իր արած զեկուցման մէջ, առաջարկում է գիւղացիների աղքատութեանն առաջն առնելու համար. 1) զարգացնել անտառներ անտառներից զուրկ տեղերում, 2) խիստ աղքաբնակութիւն ունեցող տեղերից գաղթեցնել ժողովրդի մի մասը մեր երկրի աւելի ազատ հողեր ունեցող նահանգները և 3) մտցնել մեր գիւղական ագրաբնակութեան մէջ հոտաւէտ և դեղերի համար գործածվող խոտերի մշակութիւնը։

Երեք առաջարկութիւններն էլ շատ դեղեցիկ առաջարկութիւններ են, բայց արդեօք իրագործելի են դրանք մեր երկրում, գոնէ մօտիկ ապագայում։

Անտառներ մի որ և է երկրում զարգացնելը ահագին գումարներ է պահանջում և անտառներ զարգացնելը ամէն տեղ լինում է կամ կենտրօնական կառավարութեան, կամ ինքնավար համայնքի գործը։ Գիւղատնտեսական ընկերութեան մէջ Տէր-Պետրոսեանի զեկուցման առիթով ծագած վիճաբանութիւնների ժամանակ ընկերութեան նախագահի կողմից տուած պատասխանից երևեցաւ որ կառավարութիւնը ոչ տրամադիր է, ոչ էլ դրա համար ազատ նիւթական միջոցներ ունի իր ձեռքում, որպէս զի սկսի անտառներ զարգացնել Կովկասի անտառազուրկ տեղերում։ Ամէն բանից երևում է որ Գիւղատնտեսական ընկերութիւնը և նրա նախագահը, որքան էլ համակրէին անտառների մեր երկրում զարգացման գործին, աւելորդ և ապարդիւն պիտի համարեն այդ հարցի առիթով առանձին խնդրագրով դիմել կառավարութեանը։ Մնում է, ուրեմն, ինքն համայնքը որ այդ գործին պէտք է ձեռնարկէր։ Բայց մեզանում համայնքը այն ինքնավարութիւնը չունի, որ օրէնքով վայելում է եւրոպական Ռուսաստանի զեմստվոն (земское самоуправленіе), չունի ուրեմն իր կարգադրութեան տակ որ և է նիւթական միջոցներ, մանաւանդ այնքան նիւթական միջոցներ, որ կարողանար ձեռնարկել անտառների զարգացման մեծածախս գործին։ Մենք, ի հարկէ, մեզ թոյլ ենք տալիս մեր համայնքը համեմատել ռուս գիւղական ինքնավարութեան դրութեան հետ և այդ տեսակ ինքնավարութիւնն էլ մեզ համար նախանձելի է, և մենք այլ ևս չենք խօսում, օրինակի համար, շվեյցարական համայնքի ինքնավարութեան մասին, որ գիւղատնտեսական գործերում իր վայելած իրաւունքների և ունեցած ահագին նիւթական միջոցների պատճառով հրաշքներ է գործում։ Շվեյցարիան իր բոլոր հրաշալի անտառների տնկելու, զարգացնելու և պահպանելու գործը իր համայնքի ինքնավարութեանն է պարտական։

Երկրորդ միջոցը, որ առաջարկում է Տէր-Պետրոսեանի զեկուցումը, մի դաւառի խիտ ազգաբնակութեան մի մասի միւս աւելի ազատ դաւառի կամ նահանգի մէջ գաղթեցնելն է։ Այդ գործն էլ մեզանում բաւական դժուարութիւնների պիտի հանդիպի և կարօտ է կառավարութեան կողմից յատուկ թոյլատրութեան, քանի որ, ինչպէս յայտնի է (և այդ մասին շատ գրվեցաւ մայրաքաղաքների ռուսաց մամուլի մէջ) մեզանում օրէնքով թոյլ տուած չէ գիւղացիների ազատ, անարգել գաղթականութիւնը մի տեղից միւս տեղ։ Վերջապէս Տէր-Պետրոսեանի առաջարկութիւնը գաղթեցնելու գիւղական ազգաբնակութիւնը մի տեղից միւս տեղ զուցէ տնտեսական տեսակէտից դովելի է, բայց բարոյապէս համակրելի չէ կարող համարվել, քանի որ մեր գիւղացու մէջ այնքան զօրեղ են աւանդական զգացմունքները, որ նրան կապում են իր հայրենի հողի հետ, որտեղ ապրել ու աշխատել են, որը մշակել են իրանց քրտինքով նրա պապերը, որ հազիւ թէ մի տեղից միւս տեղ գաղթեցնելու միջոցը աղքատութեանն առաջն առնելու համար կարող է որ և է համակրութիւն գտնել նոյն ինքն գիւղացու շրջանում, մանաւանդ որ եթէ գաղթականութեան պրինցիպն ընդունվի, գաղթականութիւնները կարող են կատարվել և ոչ թէ մտիկ նահանգներ, բայց և հեռու նահանգներ, որոնք իրանց դիրքի, կլիմայի տարբերութեամբ կարող են կորստաբեր ներգործութիւն ունենալ մեր գիւղական ագրաբնակութեան վրա։

Մնում է այժմ պ. Տէր-Պետրոսեանի երրորդ առաջարկութիւնը, մտցնել մեր գիւղական ագրաբնակութեան մէջ հոտաւէտ և դեղերի համար գործածվող խոտերի մշակութիւնը, որ, զեկուցանողի կարծիքով, մեծ շահ է խոստանում մեր գիւղացիներին։ Նախ՝ մենք չենք հասկանում ինչ շահ պէտք է ունենայ այդ խոտերի մշակութիւնից մեր գիւղացին. արդեօք զեկուցանողը կարող է երաշխաւորել որ բացի Թիֆլիսի, Երևանի, Գանձակի և Բաքուի, մի խօսքով մի քանի մեծ քաղաքների մի տաս, քսան հատ դեղատներից մեր գիւղացիների ձեռքով մշակվող դեղերի խոտերը կը կարողանան արտահանութեան ճանապարհ գտնել Ռուսաստան և արտասահման, այդպիսով մրցութիւն անելով թէ նոյն իսկ Եւրօպայում ցանվող և թէ Եւրօպացիների կոլոնիաներից Եւրօպա բերվող նոյնանման խոտերի ահագին քանակութեան հետ։ Եւ եթէ էլ ճշմարիտ այդ մշակութիւնը խոստանար մեր գիւղացիների նիւթական բարօրութեան մակերեսոյթը բարձրացնելու,—ի՞նչ միջոցներով պէտք է հասանէինք մեր գիւղացիների մէջ նրանց համար այդ դեռ ևս նոր և անծանօթ մշակութիւնը մտցնելու։

Եթէ մեր Գիւղատնտեսական ընկերութեան կոչումը միայն դրա մէջն է պարունակվում, որ ամիսը մի անգամ դահլիճը լամպաներով է լուսաւորվում, նախագահը բաց է անում նիստը, ներկայ գտնվողներից մէկը մի որ և է զեկուցում է անում, առանց մտածելու զեկուցման մէջ յայտնված մտքերի կեանքի մէջ գործադրութեան հնարաւորութեան մասին, յետոյ թէյ խմելու ժամանակ վիճաբանութիւնների մի տուրնիր է լինում, և ամէն բան դրանով վերջանում է,—այն ժամանակ մենք խօսք չունենք ասելու։

Բայց եթէ պահանջենք, որ իւրաքանչիւր զեկուցման մէջ յայտնված միտքը գործադրութեան որ և է հնարաւորութիւն և կարելիութիւն ունենայ, այն ժամանակ Տէր-Պետրոսեանի զեկուցման նման զեկուցումները, որ զարգացնում են միայն գիտութիւնը, մեծ շահ է խոստանում մեր գիւղացիներին։ Նախ՝ մենք չենք հասկանում ինչ շահ պէտք է ունենայ այդ խոտերի մշակութիւնից մեր գիւղացին. արդեօք զեկուցանողը կարող է երաշխաւորել որ բացի Թիֆլիսի, Երևանի, Գանձակի և Բաքուի, մի խօսքով մի քանի մեծ քաղաքների մի տաս, քսան հատ դեղատներից մեր գիւղացիների ձեռքով մշակվող դեղերի խոտերը կը կարողանան արտահանութեան ճանապարհ գտնել Ռուսաստան և արտասահման, այդպիսով մրցութիւն անելով թէ նոյն իսկ Եւրօպայում ցանվող և թէ Եւրօպացիների կոլոնիաներից Եւրօպա բերվող նոյնանման խոտերի ահագին քանակութեան հետ։ Եւ եթէ էլ ճշմարիտ այդ մշակութիւնը խոստանար մեր գիւղացիների նիւթական բարօրութեան մակերեսոյթը բարձրացնելու,—ի՞նչ միջոցներով պէտք է հասանէինք մեր գիւղացիների մէջ նրանց համար այդ դեռ ևս նոր և անծանօթ մշակութիւնը մտցնելու։

Եթէ մեր Գիւղատնտեսական ընկերութեան կոչումը միայն դրա մէջն է պարունակվում, որ ամիսը մի անգամ դահլիճը լամպաներով է լուսաւորվում, նախագահը բաց է անում նիստը, ներկայ գտնվողներից մէկը մի որ և է զեկուցում է անում, առանց մտածելու զեկուցման մէջ յայտնված մտքերի կեանքի մէջ գործադրութեան հնարաւորութեան մասին, յետոյ թէյ խմելու ժամանակ վիճաբանութիւնների մի տուրնիր է լինում, և ամէն բան դրանով վերջանում է,—այն ժամանակ մենք խօսք չունենք ասելու։

Բայց եթէ պահանջենք, որ իւրաքանչիւր զեկուցման մէջ յայտնված միտքը գործադրութեան որ և է հնարաւորութիւն և կարելիութիւն ունենայ, այն ժամանակ Տէր-Պետրոսեանի զեկուցման նման զեկուցում-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՇԱՎՇԷԹ-ԻՄԷՐԽԷՎ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

—

IV.

Շավշէթը, որ մի ժամանակ կազմում էր Գուգարաց նահանգի մասը, Հայաստանի ամէն դաւառներից աւելի մնացել է վրաց իշխանութեան ներքեւ։ Նոյն իսկ Խորենացին յիշում է սորան. «Վիրահայք» կոչմամբ, որից յայտնի է որ թէև վրաց երկիր չէր համարվում, բայց իսկապէս հայ նահանգ ևս չէ կարելի համարել։ Շավշէթի վրացիք թիւրքաց տիրապետութեան ժամանակ խոկոն ամբողջվին մտել են Խալամի դիրքը. իսկ մօտակայ Իմէրխեվ վիճակի գիւղերի բնակիչը աւելի ուշ ժամանակներում։ Եւ դրանից է, անշուշտ, որ Իմէրխեվցիք դեռ ևս խօսում են իրանց մայրենի, վրաց լեզուով, ուր որ Շավշէթի գիւղերում վրացերէն խօսողներն այնքան առատ չեն։ Թէ հայերից, այդ երկու վիճակներում, ինչքանն են ընդունել մահմետականութիւնն դա յայտնի չէ, բայց պէտք է կարծել, որ եթէ ընդունած են, այդ էլ շատ չնչին մասն, ըստ որում Սաթլէջ, Օքրօքակերտ, Մամանէլիս և Փսիկոբ գիւղերն լոլորն բնակված են հայերից։ Միայն հաւանական է, որ Մամանէլիսի հայերի մի մասն ընդունած լինին մահմեդականութիւնը։ Այդ չորս գիւղերից Փսիկոբի և Մամանէլիսի հայերն ամբողջապէս և Սաթլէջլին մեծ մասամբ կաթոլիկներն են, իսկ Օքրօքակերտը միայն լուսաւորչական է։ Շավշէթում, հայերից և վրացիներից զատ, բնակվում են եղել նաև հրէաներ։ Ինչպէս, օրինակ, Խանթրուշէթ և Վերխնաւ գիւղերի բնակիչը բոլորն էլ հրէայ էին և դրանք ևս ընդունել են խալամի կրօնն։ Մինչև յայժմ կայ Վերխնաւում կիսափուլ հրէական սինագոգա։

Շավշէթն ու Իմէրխէվը ծայրէ ի ծայր լի են տների, ամրոցների, աշտարակների և եկեղեցիների աւերակներով։ Դոքա երևում են երբեմն բարձրաւանդակների, բլուրների և ժայռերի վրա և երբեմն էլ խոր անտառների մէջ, գետակների եզերքին և ձորերի մուտքերի վրա։ Այսպէս օրինակ Յորցել գիւղից մինչև Շինալ գիւղը, ուր զբանվում է և առաղջարար հանքային ջուր 8 ժամի տարածութեան վրա ամէն մի քայլափոխին, գրեթէ, պատահում է մարդ աւերակներին, որոնք ցիր, ցան երևում են երբեմն բարձանց վրա և երբեմն անտառների խորքում։

Ես այդ աւերակներից կը նկարագրեմ նշանաւորներն։

Սաթլէջ գիւղը բաժանված է 2 բաժնի։ Վերին և Ներքին Սաթլէջ։ Առաջինը կոչվում է նաև Սաթլէջ—Բաբաթ *). Սաթլէջ—Բաբաթում բնակվում են հայերն, լուսաւորչական և կաթոլիկ, իսկ ներքին Սաթլէջում մահմետականներ։ Վիճակային կառավարութիւնը (Участковое Управленіе) գրանվում է հայերի թաղում։ Իսկ ներքին Սաթլէջում գտնվում են Շավշէթի նախկին աւատատէրերի թէմրի-օղլի բէկերի տները, որոնք ինքնին մի յարգելի հնութիւն են ներկայացնում, թէև դոցա շինութեան ժամանակն այնքան հեռու չէ մեզանից։ Այդ տներն շինված են այնպիսի կերպով, որ թէպէտ բնակարան են, բայց ի հարկին կարող են և դղեակի կերպարանք առնուլ։ Պատերն ահագին հաստութիւն ունին։ Վարի յարկում ընդարձակ ախոռ կայ, ծառաների սենեակ և սէրայ։ Վերի յարկում գտնվում է կանանոցը և հիւրանոցի ընդարձակ սենեակներ, տաճկական ճաշակով։ Այդ տների մօտ գտնվում է մզկիթը, որ նախ եղել է հայոց ս. Գէորգ եկեղեցի։ Նախկին եկեղեցին կամ այժմեան մզկիթն ունի 3 փոքր կամար։ Դուռը նախ հարաւային կողմից է եղել, յետոյ թիւրքերն ծեփել արևմտեան կողմից են բացել։ Եկեղեցւոյ մեծութիւնը 20 ոտքից աւել չէ։ Եկեղեցւոյ պատի արտաքին երեսի վրա ս. Աստուածածնայ պատկերն է քանդակված եղել, բայց թիւրքերը մզկիթ շինելիս կիրով ծեփել, անյայտացրել են։

Սաթլէջ գիւղը մտնելու համար հարկաւոր էր անցնել մի նեղ և ձիգ կրմանից, որ հեղհեղել բարձրանալով հասնում է խէմշի-օղլիների տան առջև, որտեղից և սկսվում է հարթ ճանապարհ դէպի գիւղ։ Այդ երկար ու ձիգ զառիվերը, որի ստորոտը ծեծվում է Սաթլէջի գետակից, այժմ գրեթէ հարթացել է, շնորհիւ պ. Կամսարականի, որ իր վիճակի ճանապարհների մասին ցոյց տուած ջանք ու աշխատանքով, նախանձելի օրինակ է ներկայացել իր պաշտօնակիցներին և որի այդ հոգն ամենայն դրուատեսց արժանի է։ Սաթլէջի այդ զառիվերի ընդարձակ ժայռոտ բլուրի բոլոր տարածութեան վրա պ. Կամսարականի նոր շինել տուած ճանապարհին մօտ կանգնած է Սաթլէջի բերդը, որ պաշտպանում է Սաթլէջի մուտքը։ Բերդի հիւս.—արևելեան կողմից մի զեղանափոր ճանապարհ կամ լաւ ևս մի մութ խոռոչ բացվում է բերդի ստորոտից հոսող առուակի վրա։ Բերդը երկու մասն է բաժանված, ներքին և արտաքին, որոնց երկուքն էլ բարձր պարիսպներով շրջապատած են։ Արտաքին պարիսպը տեղ տեղ քանդած է, բայց դուռը մինչև այժմ անխախտ է մնացել և բացվում է դէպի արևելք, գետափը, քարաժայռի վրա, որի վերայով էլ դանից մինչև գիւղը մի նեղ և օձաղտոյտ ճանապարհ կայ։ Ներքին և արտաքին պարիսպների միջոցի վրան ոչինչ չէնքի երևոյթ չը կայ, տեղ տեղ պառկած են միայն հաստարմատն ժայռեր։ Այժմ քանել են զտնագան փչի տնկեր և մի քանի ընկուզենի, որոնց վրա փաթաթված են խաղողի թուրթեր։ Արտաքին պարսպի ամբողջ մնացած պատերի մէջ դեռ ևս երևում են կէս արշին մեծութեամբ խոռոչներ, ծակեր, որոնք ինչպէս երևում է, արտաքին թշնամուն դէմ նետաձգելու կամ գնդակոծելու համար են։ Ներքին պարսպի պատի լայնութիւնը 3 արշինից աւելի է։ Պարիսպը երկու դուռ ունի, որոնց միջի պատի բարձրութիւնը 5 արշինից էլ աւելի է։ Ներքին պարսպով պատած միջավայրը պէտք է համարել միջնաբերդը։ Սրա հարաւ—արևելեան կողմը կանգնած է բարձրաբերձ մի աշտարակ, որ տիրապետում է Սաթլէջ բերող ճանապարհի ամբողջ տարածութեան և նրա մուտքին։ Աշտարակը մեծ մասամբ կանգուն է մնացած։ Նրա ներքին չրջապատը 10 սաժէն է, իսկ բարձրութիւնը 20 սաժէնից էլ աւել է երևում։ Աշտարակի միջինը, պատի ներքին երեսը 5 կարգի է բաժանված։ Իւրաքանչիւր կարգը 4-ական սաժէն հեռաւորութիւն ունի միմեանցից։ Այդ կարգերի վրա ուղիղ ղծով չարված են փոքր անցքեր։ Ինչպէս երևում է, այդ կարգերը նախ տախտակամածով դարսված են եղել, որոց վրա ռազմիկները կանգնած այդ ծակերից արտաքին թշնամուն պէտք է փղդակոծէին։ Ամբողջ միջնաբերդը, որ կլորակ ձև ունի, պատած է ներքին պարսպով և 86 քայլ դրամագլուխ ունի։ Բերդի մէջ կայ մի կիսափուլ եկեղեցի գմբեթաձև, երեք կամարով, որի երկայնութիւնն 14 քայլ և լայնութիւնը 5 քայլ է, երկու գետնափոր, որոնք դուցէ պաշարի պահեստ են եղել, և գետնաթաղ կարասներ։ Բայց ամէնից աւելի ուշադրութեան արժանին 20 արշին շրջանակ և 10 արշին խորութիւն ունեցող մի աւազան է, որ փորված է միակտուր քարի մէջ։ Շատ հաւանական է, որ դա պատերազմական մթերքի պահեստ լինէր։ Հնօրեայ աւազանը՝ այսօր զոդցես իր դարաւոր մեռելութիւնից զարթած կենդանութեան նշան է ցոյց տալիս։ Աւազանի մէջ թափված հողից սկսել են բուսնել թփեր։ Ներքին պարիսպը մեծ մասամբ կանգուն է մնացած և տեղ տեղ հասնում է մինչև 30 սաժէն բարձրութեան։ Ամբողջ

*) Թիւրքերը սովորութիւն ունեն քրիստոնեաներից բնակված թաղին բաբաթ կոչումը տալ։ Այդպէս՝ ամէն գիւղ ունի իր բաբաթը, այսինքն թաղն, ուր բնակվում են յատկապէս քրիստոնեայք։ Բուստ իսկ՝ այդ բառն արաբական բիբաթ բառն է, որ նշանակում է իջևան, քարավանսարայ։

ները ոչինչ գին և նշանակութիւն չունեն երկրի համար:

Մենք թոյլ ենք տալիս մեզ հարցնել զեկուցանողին. ի՞նչ միջոցներով, ի՞նչ հնարներով պէտք է սովորեցնել մեր գիւղացիներին, մոցնել նրանց մէջ գիւղական մի որ և է նոր արդիւնքի մշակութիւնը: Ինչ միջոցներ դրա համար ունի Գիւղատնտեսական ընկերութիւնը: Նա ոչ իր դպրոցներն ունի երկրում սփռված, ոչ իր ինստրուկտորներ (հրահանգիչներ) ունի երկրի այլ և այլ տեղերի գիւղական ազգաբնակութեան մէջ, ոչ էլ որ և է կապեր ունի ժողովրդի հետ, վերջապէս իր միակ գործը որ կատարում է, այն է իր զեկուցումների տպագրելը,—այդ էլ անում է ռուսաց լեզուով, որի ընթերցանութիւնից օգտվել չեն կարող ռուսերէն չիմացող մեր գիւղացիք:

„Մշակի“ № 12 մէջ տպված մեր առաջնորդող յօդուածում խօսելով մեր գիւղացիների մէջ տնային փոքր արդիւնաբերութիւնների մոցնելու անհրաժեշտութեան մասին, մենք ասացինք, որ այդ տեսակ նոր արդիւնաբերութիւնների մոցնելը մեր գիւղացիների մէջ, նրանց ընտելացնելը նոր ձևի աշխատութիւններին ու արդիւնքների մշակութեանը և եղածների ուսումնասիրութիւնը,—կարող են կատարել միայն մեր երկրի ամեն տեսակ, ամեն ձևի, ամեն դաւանութիւններին, ամեն վարչութիւններին (թէ հոգևոր և թէ աշխարհական) ենթարկվող դպրոցները և նրանց մէջ գործող վարժապետները:

Եւ առժամանակ մեր գիւղացիների նիւթական և բարոյական բարօրութիւնը բարձրացնելու համար մենք ուրիշ միջոց չենք տեսնում, բացի նրանց մէջ եղած տնային արդիւնաբերութիւնների (кустарныя производства) ուսումնասիրելը և այդ արդիւնաբերութիւնների նոր տեսակների մոցնելը:

Այդ հարցին նորից կը վերադառնանք:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

—

Նոյեմբերում Թիֆլիսում վախճանված փաստաբան Գէորգի Նիկոլաեվիչ Մէլէգիի առիթով մեր քաղաքում հրատարակվող «Юридическое Обозрѣніе» ռուսաց իրաւաբանական շաբաթաթերթը տպել է ուշադրութեան արժանի հետևեալ յօդուածը, իր 256 համարում: «Ընթերցողները կը գտնեն մեր ներկայ համարում մի կարճառօտ նեկրոլոգ երդուեալ հաւատարմատար Գ. Ն. Մէլէգիի, մի շատ յարգելի անձնաւորութեան, որ թէև իր ամբողջ կեանքը և իր ամբողջ ոյժերը նուիրած էր արդարադատութեան ծառայութեանը այլ և այլ պաշտօններում՝ քննիչ, նահանգական դատարանի անդամի, պրօկուրօրի և երդուեալ հաւատարմատարի, բայց մեռաւ չը թողնելով իր ընտանիքին ոչինչ նիւթական միջոցներ: Մինչև անգամ այդ օգտաւէտ գործիչի թաղումը կատարվեցաւ հանգանակված դրամարով: Այդ տեսակ տխրալի իրողութիւն աւելի ևս աչքի ընկնում և տխուր մտածութիւնների պատճառ է դառնում, որ դա մի եզակի իրողութիւն չէ մեզանում: Մամուլը վաղուց է արդէն որ իր ուշադրութիւնը դարձրեց դատաստանական վարչութեան անձանց նիւթական անապահով դրութեան վրա: Բայց ինչ պէտք է ասենք Կովկասի բազմաթիւ երդուեալ փաստաբանների մասին, որոնք շատ քիչ բացառութեամբ, չեն կարող իրանց համար մի որ և է կարողութիւն կազմել ընտրված ասպարիզում:

Պէտք է՝ ի նկատի ունենալ, որ փաստաբաններից շատերին է սպառնում պ. Մելեգիի վիճակը, և երդուեալ հաւատարմատարների մեծամասնութիւնը այսօրուայ վրա միայն կարող է երաշխաւորութիւն ունենալ, առանց որ և է յոյս ունենալու վաղուայ ապահովութեան վրա: Պէտք է նկատել, որ առհասարակ Կովկասի երդուեալ փաստաբանների նիւթական վիճակը հեռու է գոհացուցիչ լինելուց, և մինչև անդամ տխրալի է... Ինքն իրան հասկանալի է, որ ուրիշի դրամի փողերը համրել անկարելի է, բայց եթէ ձեռ առում են, որ մարդու թաղման համար փող չը կայ,—այդ դէպքում արդէն անտեղի են զանազան կասկածները...: Վերջին մի քանի տարիներում Կովկասում անողոք մահը մի քանի փաստաբաններին կեանքից զրկեց, և մենք տեսնում ենք, որ դրանք բոլորքեանք մեռան աղքատութեան մէջ, և հազիւ թաղման ծախք կար:

Եւ ում չէ յիշում, որ անցեալ տարի Կովկասի ամենահին փաստաբաններից մէկի, Կ. Բ. Եակուլովի մահուանից յետոյ, հարկաւոր եղաւ փող հաւաքել դագաղ գնելու համար...: Մենք դեռ այն ժամանակ ասացինք, որ Եակուլովի օրինակը—«մի ճարտարախօս հերքումն է այն պեսիմիստներին, որոնք կարծում են թէ ժամանակակից փաստաբանութիւնը»—«էլդորադո» է:

Փաստաբանների այդպիսի տխուր վիճակը բնականաբար պէտք է իրանց շրջանում յարուցանէ ձգտումն, մի որ և իցէ կերպով ապահովելու իրանց ծերութիւնը, երբ թուլացած մտաւոր և ֆիզիկական ոյժերը կը հրաժարվեն պահպանել խախտված մարմինը: Օրական ընչին աշխատանքները, ընդհանուր տնտեսական քայքայման ժամանակ, և որ և է թոշակի կամ խնայողութեան (эмеритура) բացակայութիւնը, որոնք կարող էին ապահովել փաստաբանի գոյութիւնը նրա կեանքի վերջին օրերում, և տալ մի առժամանակեայ ապրելու միջոց նրա ընտանիքին,—ստիպում են մտածել ինքնօգնութեան մասին: Փաստաբանը ոչքի վրա յոյս դնել չէ կարող: Նրա միակ յոյսը, միակ ապաւէնը—նրա սեփական ոյժերն են:

Եթէ ընդհանուր դրութիւնը այնպէս է, որ նա չէ կարող մի կօպէկ յետ դցել իր վերջին օրուայ համար, այլ ընդհակառակն, աշխատանքի անորոշութիւնը ստիպում է փաստաբանին առօրեայ ծախքերի համար դիմել ժամանակաւոր պարտքերի, և այդպիսով անցկացնել օրերը օրերի հետևից,—պէտք է ուրեմն երբ և իցէ մեր փաստաբաններին մտածել՝ թշուառութեան առաջն առնելու—չենթարկվելու համար յիշեալ ցաւալի իրողութիւններին...: Միակ ելքը—այդ ընդհանուր փաստաբանական կասսա հիմնելն է Թիֆլիսի դատաստանական պալատի շրջանի բոլոր փաստաբանների համար: Միայն օրինաւոր դրամագլուխ կազմելով և այդ գործերի դրական հիմունքների վրա ուշք դարձնելով կարելի է մի փոքր պահպանել փաստաբանին կեանքի դժուար բոպէներում, հիւանդութեան և ծերութեան ժամանակ:—Այնպիսի դրամագլուխը կարող է կազմվել միանուագ և ամսական պարտաւորացուցիչ տուրքերից:

Այդ մի և նոյն դրամագլուխը կարող է ծառայել փաստաբաններին՝ կարճ ժամանակուայ փոխառութիւններ անելու համար, ժամանակին դարձնելու բաւարար երաշխաւորութեամբ: Փոխառութիւններից ստացված տոկոսները պէտք է գործադրվեն դրամագլուխը աճեցնելու համար: Բացի դրանից, փաստաբանական ընդհանուր դրամագլուխը կարող է աճել երդուեալ փաստաբանների առանձին համախորհուրդի միջոցներով, որի նախագիծը կազմել են Թիֆլիսի երդուեալ հաւատարմատարները եօթ տարի սրանից առաջ, բայց որը մինչև այսօր դեռ չէ իրականացել, (նախագիծը գտնվում է «Юрид. Об.» խմբագրատանը):

Այդպիսով կազմված դրամագլուխը իր տոկոսներով, կազմելով տուողների սեփականութիւնը, վերջում կարող է լինել մի փոքրիկ ապահովութիւն փաստաբանի և իր ընտանիքի համար:—Ընդհանուր փաստաբանական կասսա հիմնելու միտքը նոր չէ, Վարշավայի դատաստանական պալատի շրջանի երդուեալ հաւատարմատարները այդ բանը իրագործեցին այս օրերում: Վատ չէր լինի, եթէ մեր երդուեալ հաւատարմատարները նոյնն անէին»:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ հաղորդում են, որ 22-ին փետրվարի տեղի ունեցաւ այդ քաղաքի կլուբի դահլիճում պ. Կարա-Մուրզայի խմբերգական 3-րդ կօնցերտը: Խումբը բաղկացած էր մօտ 50 անձինքներից և բոլորն էլ հագնված էին միատեսակ: Դահլիճը լի էր բազմութեամբ, որի թիւում կային բաւական շատ ռուսներ, գլխաւորապէս ինտելիգենտ դասակարգից: Պ. Կարա-Մուրզա և իր խումբը արժանացան բուռն ծափահարութիւնների: Այդ կօնցերտին մասնակցում էին պ. Կարապետանց, որ կարդաց Գամառ-Քաթիպայի «Վարդանի մահը» վերնագրով բանաստեղծութիւնը, և նրա 12 տարեկան որդին, որ ածեց պիանօի վրա: Երգեցողութիւնից յետոյ սկսվեցաւ պարահանդէս: Մեր թղթակիցը թէև վկայում է, որ յիշեալ երեկոյթը շատ լաւ աջողվեցաւ, բայց աւելացնում է, որ աչքի առաջ ունենալով որ այս տեսակ կօնցերտներին ուրախութեամբ յաճախում են ոչ թէ միայն հայեր, բայց և հայերէն չիմացող այլազգիներ, հարկաւոր էր, որ տոմսակները միմիայն հայերէն լիզուով չը տպվէին, այլ կէս հայերէն, կէս ռուսերէն, եթէ ոչ հայերէն չիմացողները դահլիճը մտնելով և որոնելով տեղերը, մեծ դժուարութիւն էին կրում իրանց տեղերը գտնելու համար, քանի որ անկարող էին հայերէնը կարդալ տոմսակի վրա, իսկ կօնցերտի կարգադրիչները շատ անփոյթ են գտնվել, չը նշանակելով յատկապէս այլազգիներին ընդունելու և նրանց հարկաւոր տեղեկութիւնները տալու համար մի քանի ռուսերէն խօսող կարգադրիչներ: Այդպիսով օտար հիւրերը դահլիճը մտնելիս, տոմսակը ձեռքերին, ստիպված էին դիմել իրանց ռուս ծանօթներին այս կամ այն տեղեկութեան համար:

—

Ստացանք Ղզլարից Սիմիկի «Տիկին և Նաժիշտ» վէպը, որ հրատարակեց Յովհաննէս Աղա-

---

բերդի մէջ, ոչ մի տեղ, ոչ մի արձանագրութիւն չը կար:

Բերդի ստորոտի վրա, գետի երկու կողմն երևում են հին բնակութեանց աւերակներ: Ինչպէս առանդվում է, այդտեղ բնակվում են եղել հայեր, որոնց բնակութիւնն ապահոված է եղել իրանց գլխին կանգնած ահագնատեսիլ բերդից:

Բայց տաճկաց պիրելուց յետոյ, հէնց որ Խէմշի-օղլիներն և Աթաբէկեանները սկսել են իրանց ներքին կռիւներն և հակառակորդ կամ յաղթող կողմից ասպատակութիւններ են կրել, թողել են այդ տեղն և ելել են վեր և բնակել են բլուրի վրա, նախկին ս. Գէորգ եկեղեցւոյ այժմեան մզկիթի շուրջը: Իսկ երբ Խէմշի-օղլի բէկերն, բերդի մօտ չնստել են իրանց այժմեան դղեակը և խլել են քրիստոնէից ձեռից եկեղեցին, այն ժամանակ սրանք էլ գնացել են վերին Սաթլէլ և այնտեղ շինել են նոր եկեղեցի, ս. Փրկիչ, որի մասին վերև խօսեցանք:

V.

Գ. Կամսարական իր պաշտօնական գործերով հարկադրված լինելով գնալ դէպի Մամանէլիս գիւղն, որ Սաթլէլից մէկ ժամ հեռաւորութիւն ունի, ես և ինձ հետ մի հայ-կաթոլիկ վարդապետ էլ, որ շատ նախանձախնդիր էր երևում հնութեանց, ընկերացանք նրան: Ճանապարհը Սաթլէլից մինչև Մամանէլիս հարթ էր և կանաչազարդ: Մամանէլիսը բաւականի մեծ գիւղ է. այդտեղ կայ 10 տուն հայ-կաթոլիկ, որոնք ունեն մի փոքր քարաշէն մատուռ, իսկ միւսները մահմետականներ են: Մենք բոլորս էլ հիւր մնացինք հայ-կաթոլիկների մօտ, որոնք համեմատելով իրենց խեղճ և ակար դրութեան, շատ սիրով ընդունեցին մեզ: Մամանէլիսի մի մասը բաժանվում է գիւղից իր համանուն վտակով, որի աջ եզերքի վրա բնակվում են հայ-կաթոլիկները, իսկ ձախ եզերքի բլուրի վրա չարված են մահմետականների տները: Գիւղի բնակութիւնները վերջանալուց յետոյ սկսվում է մի շարք կաղամախի անտառներ, որոնք ձորակի երկու կողմը բոլորած, բարձրանում են մինչև մերձակայ սարերի հայլաները և ուռոգվում են բարձրութիւններից հոսող կակաչուն առուակներով: Ցեղացիք պատմեցին թէ գիւղից ոչ շատ հեռու քանդված հայոց եկեղեցի կայ պարապատ, որ բնականապէս մեր հետաքրքրութիւնը շարժելով, բոլորքեանք ելանք գնացինք այդտեղ: Այդ փոքր եկեղեցին գտանվում է Մամանէլիսից 5 վայրկեան հեռու, անտառի մէջ: Նա պատած է հատ պարսպով: Եկեղեցին խաչաձև է: (Շատ կարելի է, որ դա վրայ չինութիւն լինի, բայց վերջին դարում դրա մէջ պաշտօն են կատարում եղել հայերը: Նա անդորձածելի է դարձած 1850-ին, որից յետոյ հետզհետէ քանդվում է: Մինչև այդ թվին կատարվում էր պաշտօն, այդտեղ և Մամանէլիսցիք մատանցոյց էին լինում Յովհաննէս Չէրոյեան անուն 120 տարեկան մի ծերունու վրա, որ այդ եկեղեցում է պակված եղել»: Պէտք է երևակայել թէ ինչ դրութեան մէջ են գտնվել խեղճ հայերն, որ իրենց քրիստոնէական պարականութիւնները կատարելու համար ստիպված են եղել գիւղից հեռու, անտառային տեղ ընտրել: Եկեղեցին 3 կամար ունի: Առհասարակ Շավշէթի բոլոր այդ քանդված եկեղեցիք մի ոճ և յատակագծով են կառուցված: Դեռնափոր անցքեր ամէն եկեղեցու մօտ կարելի է տեսնել: Դրանց մեծ մասը բացվել են, հաւանականաբար, այն ժամանակ երբ տեղական վրացիք մահմետականութիւնն ընդունելով տաճկաց՝ «չարաբդան դէօնէն սիրքէ քէսկին օլուբ» (գինու քացախը թունդ է լինում) առածի համեմատ սկսել են քրիստոնեայ մնացած հայերի վրա խէթ աչքով նայել: Մամանէլիսի այդ հին եկեղեցւոյ աւանդատնից մի դեռնափոր ճանապարհ է բացվում դիմացի բլրի վրա, Սօփրօ գիւղի հին եկեղեցւոյ դաւթում, 10 վայրկեան տարածութեամբ: Այս վերջին եկեղեցին, որ նոյնպէս քանդած է, գտանվում է բլրի դաշտավայրի վրա: Բայց նրա մօտ այժմ քրիստոնէից բնակութիւն չը կայ: Նրա ծուխերը, այժմ իրրև ճշմարիտ մուսլիմ *) քանդել են եկեղեցւոյ քարերն և մզկիթ շինել:

Մամանէլիսի եկեղեցուց 5 վայրկեան դէպի հարաւ Նալանց կոչված բլրի վրա մի ընդարձակ քարայր կայ ուր ապաստանվում են եղել հայերը մահմետականների հալածմունքից: Այդ քարայրը վերջին ժամանակին էլ իր ծառայութիւնը մատուցել է: 1877—8 պատերազմին՝ հայերից 11 տուն ապաստանել են այդ քարայրը աւարառու մահմետականների ձեռից և մէկ շաբաթ մնացել են այդտեղ առանց դրսի հետ հաղորդակցութիւն անելու: Նալանց ծածկված է անտառով, նրա ստորոտը ծեծում է Քօնթա վտակը: Դիմացի բլուրն կոչվում է Թիգրաթ, որի մէջտեղից հոսում է նոյնանուն վտակը: Թիգրաթի վտակը սկիզբ է առնում Զաթալ-կաեա կոչված սարից, որ Թիգրաթի գլուխն է: Թիգրաթից մինչև Թէրի-կլդէ կոչված լեռը գտնվում է հնօրեայ Քօնթա քաղաքի աւերակները: Թիգրաթի վտակից մինչև Քօնթայի դաշտամուտը 150 սաժէն տարածութեան (երկայնութեան) վրա երկու կարգ չէնքերի հիմեր կան, որն այժմ մի սիրուն ծառուղի է ձևացել: Ինձ առաջնորդող Մամանէլիսցին պատմեց թէ այդ երկու կարգ չէնքերը խանութներ են եղել, որոնց մէջ մինչև այժմ ցոյց են տալիս մանուֆակտուրային խանութներն, որոնց դրաւած տեղն մինչև այժմս էլ կոչվում է «բէզէսթան»: Սակայն հիմայ դրանք բոլորովին հիմնայատակ եղած և անտառով պատած են: Խանութների կարգը վերջացնելուց յետոյ բուն քաղաքի աւերակները բացվում են մեր առաջ, մօտ ժամանակ հրդեհից այրված անտառակի միջով: Առանց որոշ կարգի զանազան տեղեր, միմեանց մօտ երևում են բնակարանաց իլատակներ մօտ 2 դեսեատին տարածութեան վրա: Այս աւերակների դաշտավայրը արևելեան կողմից պատած է Թավկալօ, հարաւային կողմից Բէրի-կլդէ սարերով և արևմտեան կողմից Կանկլիկէթ և Թիգրաթ բլուրներով, անտառապատ: Քօնթան յենվում է ժայռոտ բլրակների և վերջանում է դէպի հիւսիս, Քօնթայի ձորով, որի միջից հոսում են Քօնթայի և Թավկալօյի վտակները: Այդ ձորն էլ պատած է անտառով և վերջանում է Մամանէլիսի հովտի վրա: Քօնթայի աւերակների վրա այժմ դտանվում են մերձակայ Մորզել գիւղի ամառային եայլաները: Դաշտավայրը ուռոգվում է երկու վճիտ առուակներով, որոնք միանալով կազմում են Քօնթայի վտակը: Վտակի գլխին մինչև այժմ ցոյց են տալիս ջրաղացի մնացորդներն: Շատ տեղեր փլատակներն այնպէս են քանդված, որ քարերի չեղջակոյտ կարելի է համարել: Դրանց պատճառն է եղել վերջին ժամանակներում Թավկալօյի և Կանկլիեթի ժայռոտ բլուրներից հոսած հեղեղատները: Արդէն 170 տարի է, որ հնօրեայ Քօնթան պատկանում է Մորզելի գիւղացոց, իբրև նրանց ամառային արջառի արածելու տեղն, եայլան. այդ հաստատվում է Մորզելի Գոդօր-օղլի բէկերի ձեռքն եղած դոկումէնտով, որը թիւրքերէն է գրված և կրում է մի բէկի կնիքը:

Դեռ արեդակը նոր էր ծագել, երբ ես գիտում էի այդ հնութեան յիշատակներն. եայլաների վրաններն առաւօտեան զեփիւռից ծածանվում էին. հօտն ու արջառն տարածվել էին շրջակայ մարդերի վրա և դարաւոր հնութեանց վրա նրանք անհոգ արածում էին, ի հարկէ չը զգալով թէ մի ժամանակ այդ տեղն մարդկան հաստատուն բնակութիւնն է եղել: Հսկայաքայլ ժամանակին թատերական արարմունքների մասին խորհրդածելով, ես դարս եկայ աւերակների շրջանակից և իջնելով Թիգրաթի գահավէջը՝ հասայ Մամանէլիս, որ ճիշդ մէկ ժամի տեսողութիւն ունեցաւ իմ ձիու հանդարտ քայլովը:

Առաքել Սարուխանեանց

*) Մուսլիմ նշանակում է հաւատացեալ իսլամի: Իսլամ բառն, որ ինքնին մի բայանուն է և ծագած է սէլամէթ (փրկութիւն) բառից, իսկապէս նշանակում է հպատակութիւն, համակամութիւն (Աստուծոյ կամաց): Մուսլիմ՝ իսլամի ընդունելութիւն ներկայն (համի ֆաիլ) է: Իսկ ելեօպացուց գործածած մուղլուլման բառը՝ այդ մուսլիմի պարզապէս յոքնակին է և ուղիղն է մուսլիման: Ավելորդ է ասել, որ այդ բառերն զուտ արաբական են:

բալեանց։ Գիրքը տպված է Թիֆլիսում, Յովհ. Մարտիրոսեանցի տպարանում 1885 թվին և արժէ 60 կոպէկ։ Բայց զարմանալի է ինչպէս հայերի մէջ ոչինչ հասկացողութիւն չը կայ գրականական սեփականութեան մասին։ Սիւլիվի հեղինակութիւնը հրատարակում է Աղաբալեանց և ուրիշի այդ հեղինակութիւնը նուիրում է մի երրորդ անձին, բժիշկ Միշվէլեանցին։ Գուցէ Միշվէլեանց նիւթապէս օգնել է գիրքը հրատարակելու,—այն ժամանակ կարելի էր այդ հանդամանքը յիշել գրքի առաջին երեսի վրա, բայց ոչ թէ յանձն առնելով մէկի հեղինակութիւնը հրատարակելու, նուիրել այդ հեղինակութիւնը մի երրորդ անձին։

—

Փետրվարի 24-ին տեղի ունեցաւ ԹԻՖԼԻՍԻ Կրուժօկում մեր քաղաքում բնակվող ֆրանսիական կօլօնիայի զգեստաւորված պարահանդէսը։ Պարահանդէսի կարգադրիչ տան տիկինը քաղաքիս ֆրանսիական կօնսուլի, պ. Մայերի կինն էր։ Պարահանդէսը բարեգործական նպատակով էր և տիկին Մայէր ինքն ալէգրիի տոմսակներ էր ծախում։ Ծախվեցան 6000 տոմսակ, իւրաքանչիւրը 20 կոպէկով։ Պարահանդէսը շատ կենդանի էր. այլ և այլ թէ պատմական և թէ ժամանակակից զգեստներով հագնված ֆրանսուհիք և ֆրանսիացիք, ինչպէս միայն Ֆրանսիայի որդիները գիտեն, ցոյց տուին իրանց սովորական ուրախ տրամադրութիւնը և այդ ուրախ տրամադրութեամբ վարակվեցան և պարահանդիսում գտնված օտարականներն էլ։ Կանանց և օրիորդների մի քանիսները, իրանց գոյնզգոյն, նկարչական շորերով շատ սիրուն էին և շնորհալի։

—

«Աղբիւր» տպագրի խմբագիր, պ. Տիգրան Նազարեանց դիմեց մեզ խնդրելով, որ թոյլ տանք նրան արտատպել «Աղբիւրի» մէջ մեր «Մի տարի Շվէյցարիայում» յօդուածների շարքից այն կտորները, որոնք որ և է մանկավարժական նշանակութիւն ունեն։ Թէև մենք այդ յօդուածներից արտատպելը և նրանց որ և է լեզուով թարգմանելը ոչ ոքին չենք թոյլ տայ, միանգամայն մեզ վերապահելով այդ յօդուածների իրաւունքը, բայց «Աղբիւր» ամսագրին ուրախութեամբ թոյլ ենք տալիս արտատպել յիշեալ յօդուածներից այն կտորները, որոնք կարող են հետաքրքրել ամսագրի բաժանորդներին։

—

Մեզ գրում են հետևեալը ԶԱՆԳԵԱԶՈՒՐԻ գաւառից։ «Անցեալ օրերումս Շիվանի-ձորի (Աստաղուր) գիւղացի մի երիտասարդ օտարութիւնից վերադառնալով իր գիւղը, ունեցած փողերը յանձնում է իր մի բարեկամին պահելու, բայց երբ մի քանի օրից յետոյ իր յանձնած փողերը յետ է պահանջում, բարեկամը ուրանում է որ փող ստացած լինէր երիտասարդից։ Այս վերջինը, յուսահատութիւնից վերցնում է ատրճանակ, գնում է գիւղից դուրս, մի հին աւերակ եկեղեցի է մտնում և այնտեղ անձնասպանութիւն է գործում»։

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են։ «Տեղս բնակվող մի չուշեցի երիտասարդ, դաշոյնագործ, հիւանդանալով սաստիկ տենդով, բնականապէս, սկսեց դել տալ։ Տէր ծանօթները հաւաքվելով հիւանդի գլխին, վճռում են որ խեղճը անշուշտ գժվել է։ Կանչում են մօլլային, գիր, թալիսման անում,—բայց ոչինչ չէ օգնում։ Վերջը մօլլայի խորհրդին հետևելով, հիւանդի մէջ նստած դևին (սատանային) արտաքսելու համար, սկսում են հիւանդին անգթաբար ծեծել, նաև նրա ձեռքն ու ոտքը պինդ կապելով։ Դիպուածով իմանալով եղելութիւնը, այցելեցի խեղճ երիտասարդին և գտայ նրան մի փոքրիկ, անշուք սենեակում պառկած, շրջապատված տան, տան և հինգ երիտասարդներով, որոնք համոզված լինելով թէ հիւանդի մէջ դև է նստած, հերթով ծեծում էին խեղճ երիտասարդին։ Մեծ աշխատանք էր հարկաւոր լինէ տխմարներին համոզելու, որ թողնեն իրանց բարբարոս բժշկական ձևերը և կանչեն զինուորական բժշկին։ Սա եկաւ և հիւանդին զննելուց յետոյ յայտնեց որ խեղճը տիֆ ունի։ Բայց միւս օրը տեղեկացայ, որ բժշկի պատուէրները ուելորդ համարելով կատարելու, հիւանդի վրա հոգատարութիւն ունեցողները կրկին սկսեցին դիմել իրանց տնային բժշկական միջոցների,—ծեծել հիւանդին և ուժեղ լուծողական տալ նրան, երևի կարծելով որ լուծողականի միջոցով էլ դևը կարող է դուրս գալ հիւանդից»։ Եւ ահա այդ տըխմար ժողովրդից է, որ մեր մի քանի ֆրազեօր պուբլիցիստները մեծ մեծ բաների և գեղեցիկ ապագայի են սպասում։ Եւ այդ տեսակ տխմար, մնոտիապաշտ, նախապաշարված, բարբարոս ժողովուրդը, դեռ իրաւունք է համարում իրան քրիստոնեայ անուանել, և այդ տեսակ քրիստոնէական զգացմունքն է, երևի, որով շատերի կարծիքով, պահպանվում է մեր մէջ ազգայնութիւնը։

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են, որ այդտեղի սակաւաթիւ հայ երիտասարդութեան մէջ մեծ համակրութիւն գտաւ Գամառ-Բաթիպայի 35 ամեայ յօբելեանը տօնելու առաջարկութիւնը։ Բաթումից մեզ գրում են և այն, որ այդտեղ եղանակը այժմս կատարելապէս գարնանային է. մանուշակները մի ամսվ չափ է արդէն որ բացվել են, իսկ այժմ ծառերի վրա էլ սկսած են ծաղիկներ երևալ։

—

Զանազան սխալ լուրերի տարածվելուն առաջն առնելու համար ամսիս 26-ին Էջմիածնից հեռագրում են Շահվերդեանի գործակալութեանը։ «Ճեմարանում երևաց ծուխ, կարծեցին թէ հրդեհ է, բայց ամեն բան վերջացաւ առանց հետևանքների։ Ուսումը շարունակվում է»։ Ճեմարանը խնդրում է բոլոր լրագիրներին այդ լուրն արտատպել։

—

Նորերումս Օրենբուրգեան նահանգի մի գիւղում, ինչպէս հաղորդում է «Современныя Извѣстія» լրագիրը, երևում է մի զինուոր, որը սկսում է լուր տարածել, իբր թէ նոր օրէնք է դուրս եկել, որի զօրութեամբ գիւղացիք պիտի ընկնեն կալուածատէրերի ձեռքի տակ, և իւրաքանչիւր տարի ամեն մի հոգուց 70 ռուբլ հարկ պիտի առնեն։ Զինուորի խօսքերին հաւատում են, և լուրը կայծակի արագութեամբ տարածվում է ժողովրդեան մէջ նորանոր յաւելուածներով, իբրև թէ կալուածատէրերը արդէն եկել են և բերված են Պետերբուրգից «քասկների» մէջ։ Այդ լուրերի ազդեցութեան տակ ժողովուրդը սկսեց յուզվել և գրգռվել։ Տեղական իշխանութեան միջամտութեան շնորհիւ գործը ոչինչ հետևանք չունեցաւ։

—

Կովկասում գտնվող Շարօպանի մարդանեցի հանքերի կանոնաւոր արդիւնաբերութեան համար Կովկասի կառավարչապետը՝ Իշխան Դոնդուկով-Կորսակով ներկայացրեց ճանապարհների հաղորդակցութեան նախարարութեանը մի գրութիւն հանքերի արդիւնաբերողների ներկայացուցիչների կողմից, որով նրանք խնդրում են երկաթուղու գիծ անցկացնել Շարօպանից դէպի անդրկովկասեան երկաթուղու գիծը։ «Մշակի» անցեալ համարներից մէկում հաղորդեցինք, որ մարդանեցը տեխնիքական մեծ կարեորութիւն ունի։ Շարօպանի մարգանեցի հանքերի մշակութիւնը սկսված է 1879 թվից, և այս ժամանակից իւրաքանչիւր տարուայ դուրս տարածը Անդր-Կովկասեան երկաթուղու գծով հասել է 50,000 պուդից մինչև 2,500,000 պուդի։ Նախարարութիւնը համաձայնելով առաջարկութեան օգտաւէտութեան հետ, մի քանի բացատրութիւններ էր խնդրել իշխան կառավարչապետից։ Այժմ, ինչպէս հաղորդում է «Русск. Кур.» լրագիրը, հարկաւոր տեղեկութիւնները ստացված են, և շուտով ուշադրութեան կառնվի երկաթուղու գծի շինութեան խնդիրը։

—

Ամսիս 20-ին Թիֆլիսի Գիւղատնտեսական ընկերութեան շինութեան դահլիճում կայացաւ Կենդանիների հովանաւորութեան ընկերութեան ընդհանուր ժողովի նիստը։ Նիստը բազմամարդ չէր։ Ժողովում յայտնվեցաւ մի ուշադրութեան արժանի խնդիր. այն է կազմել մի Մանկական ընկերութիւն և այդպիսով մանուկներին էլ միջոց տալ մասնակցելու և նըպաստելու կենդանիների հովանաւորութեան ընկերութեան նպատակին։ Ցոյս ունենք, որ ընկերութիւնը ամեն ջանք գործ կը դնի այդ բանը յաջողեցնելու, որին ամենայն սրտով համակրում ենք, և որը անկասկած մեծ համակրութիւն կը գտնէ հասկացող ծնողների կողմից։ Ցանկալի է, որ ընկերութիւնը ջանք գործ դնէր դուրս գալու այն անյայտութիւնից, որի մէջ այժմ գտնվում է։

—

ՄԵՂՐԻ գիւղից մեզ գրում են։ Այստեղ շերամապահութիւնը է ամենագլխաւոր պարապմունքներից մէկը։ Թթենի մեծ քանակութեամբ կայ։ Գրանից օգտվելով գիւղացիք վերցնում են մեծ չափով որթի սերմ. շատ ընտանիք կայ, որ վերցնում է մինչև մի գրուանքայ սերմ, մանաւանդ երբ չը կար իտալական սերմը։ Այժմ էլ խորասանը և ժապոնը գործ են ածվում, որոնք և տարածում են չերամի հիւանդութիւնը։ Շատ սերմ վերցնելով, գիւղացին ստիպված է որթը պահել խիտ, չը հետևել կանոնաւոր հոգատարութեամբ, և օրը ամենաշատը երկու անգամ կերակրել։ Գիւղացին շատ սերմ վերցնելով այսպէս է դատում. «եթէ մինչև անգամ շատ վատ լինի, և մի մսխալից երկու գրուանքայ բօժօժ դայ, ես կունենամ 100 գրուանքայ եթէ վերցնեմ 50 մսխալ»։—Եւ այդպիսով երբէք աշխատանքը չէ վարձատրվում, ու խեղճ գիւղացին ամբողջ տարին տանջվելով, էլի ստիպված է 25—30 տոկոսով պարտք վերցնել։—Տնտեսագիտական ուսում,—ահա թէ ինչ է հարկաւոր գլխաւորապէս հայ գիւղացու զաւակին։ Այն ժամանակ, անկասկած, իր որդու ուսման վարձը տալու համար գիւղացին պարտք չի անի և այն ժամանակ ծնողք իրանց զաւակներին քաղաք չեն ուղարկի կեանք մաշելով կոպէկներ աշխատելու։

—

ՄԵՂՐԻ գիւղից մեզ գրում են։ «Բամբակի տեղական «ափաթ» և «չերա» կոչուած հիւանդութիւնների պատճառով, այս տարի բամբակ չը կար համարեա։ Եթէ չերամապահութիւնն էլ այս տարի ըստ սովորականին վատ կը լինի,—այն ժամանակ գիւղացու վիճակը միանգամայն ողբալի կը լինի։ Թիֆլիսի Գիւղատնտեսական ընկերութեան միջնորդութեամբ այստեղ, անցեալ տարի, փորձելու համար բերուած բամբակի ամերիկական սերմն էլ ստացաւ տեղական հիւանդութիւնը։ Ցանկալի է, որ Գիւղատնտեսական ընկերութիւնը այս բանի վրա աչք դարձնէր։»

—

Ցանկալի է, որ Թիֆլիսի Կայսերական Բժշկական ընկերութիւնը միջոցներ ձեռք առնէր ամսէ-ամիս տեղական լրագրութեան միջոցով ստատիստիական ճիշդ տեղեկութիւններ տալու՝ Թիֆլիսում զանազան վարակիչ հիւանդութիւններից մեռածների թվի վերաբերութեամբ։

—

Անցեալ շաբաթ ՄՕՍԿՎԱՅՈՒՄ բուրդը շատ թոյլ կերպով էր ծախվում։ Երևանեան բամբակը՝ ամերիկական սերմից ծախվում էր պուդը 8 ր. 50 կ. մինչև 8 ր. 75 կ., Նուխու մեռաքսի պուդը մինչև 175 ռուբլի։

—

Պետական կալուածների մինիստրի Կովկասի լիազօր ներկայացուցիչը Թիֆլիսում պ. Տիխէեվ, ներկայացրեց ստատս-սեկրետար Օստրովսկուն մի նախագիծ, Բագուի, Գանձակի, Քութայիսի, Թիֆլիսի, Երևանի և Ստավրոպոլի նահանգներում գտանվող պետական կալուածների կառավարութեան համար։ Այդ նախագիծը իր գլխաւոր կէտերում հաստատութիւն է գտել բարձր շրջաններում։ Անտառային դեպարտամենտը հետևեալ եզրակացութիւնը կայացրեց այդ մասին. 1) Կովկասի անտառների ընդհանուր տարածութիւնը լինելով 5,516,897 դեսեատին, պ. Տիխէեվի նախագծով 76 անտառապետութեան իւրաքանչիւր շրջանի տարածութիւնը կը լինի 71,648 դեսեատին։ Իսկ իւրաքանչիւր անտառային պահապանի հսկողութեան տակ կը լինի 4,844 դեսեատին. 2) Ինկատի ունենալով անտառների տարածութիւնը և նրանց կառավարութեան դժուարութիւնը, նախագծի մէջ որոշած անտառապետութիւնները շատ չափաւոր են։ 3) Թէև անտառային հսկողների ռոճիկները աւելի շատ են նշանակուած քան ներքին նահանգների անտառային շրջաններում, բայց այդ առաւելութիւնը արդարացնվում է Կովկասում ծառայելու դժուարութիւններով։ Համաձայնելով այդ բոլորի հետ Անտառային դեպարտամենտը մտցրեց նախագծի մէջ մի քանի փոփոխութիւններ անտառային ծառայողների թվի և դասակարգերի վերաբերութեամբ։—Այժմ «Русск. Кур.» հաղորդում է, որ այդ նոր դրութիւնը կը մտցնվի Կովկասի բոլոր նահանգներում այս տարուայ յուլիսի մէկից։

—

«Кавказъ» լրագիրը հաղորդում է, որ փետրվարի 23-ին կատարվեցաւ Պետերբուրգում լեռնային ինժինէր Ֆրիդրիխ Կոչկուլի թաղման հանդէսը։ Հանգուցեալը երկար ժամանակ ծառայում էր Կովկասում, և անգամ էր այստեղի Աշխարհագրական և Տեխնիկական ընկերութիւնների։ Կոչկուլ մեր երկրում եղած ժամանակ հետազօտել էր Կովկասի շատ տեղեր հանքաբանական կողմից։ Մի քանի տարի սրանից առաջ կառավարութեան հրամանով Կոչկուլ ուղարկված է եղել Ամերիկա այնտեղի նաւթագործութիւնն ուսումնասիրելու համար։ Իր երկարամեայ ծառայութիւնից յետոյ, իր մասնաւոր գործերի պատճառով ժամանակաւոր արձակուրդ ստանալով, Կոչկուլ Նորերումս ուղևորվեց Պետերբուրգ, բայց այնտեղ հիւանդացաւ և մի քանի օրից յետոյ վախճանվեց։

—

«Кавказъ» հաղորդում է, որ յայտնի պիանիստուհի տիկին Տիմանովա հասել է Թիֆլիս և մարտի 3-ին երկուշաբթի օրը, տալու է իր առաջին կօնցերտը Թիֆլիսի Կրուժօկում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՆԴԷՍ

—

Ի պատիւ առաջին ֆրանսիական յեղափոխութեան հարիւրամեակի՝ 1889 թվին համաշխարհային մայրաքաղաք Փարիզը իր փառքերի պատմութեան մէջ կը մտցնէ համաշխարհային աշխարհանդէսի առասպելական նկարագրութիւնների մանրամասնութիւնները։ Եւ արդէն այժմեանից թէ ֆրանսիացին, թէ ֆրանսիական կառավարութիւնը և թէ ֆրանսիական լրագրութիւնը իրանց ուշադրութեան մի նշանաւոր մասը նուիրում են այդ չը տեսնուած աշխարհանդիսի ծրագրի, նպատակի և տեսակի մանրամասնութիւններին։ Համաշխարհային ներկայ տնտեսական տագնապի ժամանակ, հնարագէտ Փարիզը, կարծես, համաշխարհային աշխարհանդիսի գաղափարի օգնութեանն է դիմում գլխաւորապէս Ֆրանսիայի տնտեսական նեղ վիճակին օգնութիւն անելու նպատակով։ Տնտեսական մեծ չարեաց հետ Փարիզը կապում է հայրենասիրութեան և ազգային փառասիրութեան զօրեղ զգացմունքները, և հասկանալի է թէ ինչու այժմեանից արդէն ֆրանսիացին սրտի տրոփիւնով է նայում 1889 թուականի պատմութեան վրա։ Եւ հասարակապետութեան ներկայ ոչ էլ շատ խաղաղ դրութեան միջոցին իսկ, նախարարութիւնը ևս իր ուշադրութիւնը դարձրել է այդ բանի վրա, որից բաւականութիւն կը ստանայ միշտ ֆրանսիացու վանողուն հոգին, թէև դուցէ այդ բոլորը մի ժամանակաւոր փայլ կը լինի տնտեսական այս ընդհանուր անկման միջոցին։ Թէև պաշտօնապէս այդ մասին չէ յայտարարուած պետութիւններին, բայց ֆրանսիական հասարակապետութիւնը հարցը արդէն վճռած է համարում, և կառավարական շրջաններում տեղեկութիւն ունեն, որ բոլոր պետութիւնները ուրախութեամբ կը մասնակցեն հուսկաւոր աշխարհանդիսին, բացառութեամբ գուցէ Գերմանիայի, որի հայրենասիրական ձգտումները ֆրանսիացիք մինչև այժմ էլ չեն կարողանում փոխադարձաբար հաշտեցնել իրանց ազգասիրական ցանկութիւնների հետ...

Նորերումս, ինչպէս Փարիզից հաղորդում են, վաճառականութեան մինիստր, պ. Լօկրուա, որը առանձին հոգատարութիւն ունի աշխարհանդիսի վրա, իր տուած տեղեկութիւններով պարզապէս յայտնել է, որ խնդիրը շատպով իր կարգի մէջ կը մտնէ։ «Աշխարհանդիսի հարցը վճռուած է, ասել է պ. Լօկրուա, կառավարութիւնը ցանկանում է մասնակից անել այդ բանին բոլոր ազգութիւններին, և գործը դարձնել միջազգային»։ Աշխարհանդիսի համար ծախք է նշանակած աւելի քան 40 միլիոն ֆրանկ։ Եւ այդ անգին դումարը ծախսելով, Ֆրանսիան, այնուամենայնիւ, համոզուած է, որ մեծ աշխատանք կունենայ։ Աշխարհանդէսը կամփոփի իր մէջ զիտութեան և արհեստների բոլոր ճիւղերը։ Եւրոպական լուսաւորութեան և յառաջադիմութեան առաջ կը դուրս բերուեն և Ասիայի հանճարի և հմտութեան ապացոյցները. և յայտնի է այժմեանից, ինչպէս հաղորդում է «Русскій Курьеръ», որ Չինաստանի և Նպաստնիայի մասերը շատ հետաքրքրական կը լինեն։

Մայիս ամսից կը սկսուեն աշխարհանդիսի պատրաստութեան աշխատանքները։ Նրանից յետոյ, չի անցնիլ մի փոքր ժամանակ, և երկրագնդի ամեն կողմերից բոլոր պետութիւնները և ազգերը կը շտապեն Ֆրանսիայի մայրաքաղաքում ցոյց տալ իրանց խելքի և ոյժի հրաշքները։ Գուցէ այն ժամանակ կարելի կը լինի լուծել տնտեսական զարգացման ապագան և պարզել այդ կողմից ապագայի վիճակը։ Սակայն հետաքրքիր է իմանալ. ինչ ունի այդտեղ ուղարկելու Կովկասը, և իր ընդունակութիւններով պարծենող հայը միթէ աշխարհանդիսի մէջ ուրիշների կողքին էլ տեղ չը պիտի ունենայ։

*

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Կ. Պոլսի հայոց լրագիրներում կարդում ենք հետևեալը: «Կիմանանք թէ մայրաքաղաքիս տպագրատանց դրաքննիչ Վարօրիդէս էֆէնդի Վենետիայի Մխիթարեան հայոց դրատունն երթալով ի Ղալաթիա, դրաւեր է հայր Ալիշանի «Սիսուան», «Շիրակ» և Մխիթարեան տպարանէ ելած այլ մի քանի կարևոր գրեանք, զորս վնասակար նկատելով կրթական պաշտօնատունը զրկեր է»:

—Բիսմարկը կողմնակի կերպով սկսում է պահպանել իր հակա-լեհական քաղաքականութիւնը: Բիսմարկի պաշտօնական օրգանը «Norddeutsche Algemeine Zeitung» սկսել է տալ ամենակատաղի յօդուածներ Բիսմարկի քաղաքականութեան վրա խօսողների դէմ:

—«Politische Correspondenz» լրագիրը հաղորդում է, որ սէր Ռայտի Պոլսում ուշանալու պատճառը այն է, որ ստացել է լորդ Բոզբերիից պատուէր, վճռողաբար խորհուրդ տալ Բ. Դրան, ի նկատի ունենալու Ռուսիայի ցանկութիւնը տաճկա-բոլգարական դաշնակցութեան մէջ: Բ. Դուռը մտադիր է հպատակվելու պետութիւնների ցանկութեանը: Պետութիւնների մէջ էլ կատարեալ համաձայնութիւն է տիրում:

—Լորդ Գրենվիլը նորերումս լրան ներկայացած բանաւորների պատգամաւորներին յայտնեց, որ կառավարութիւնը այժմ ուշադրութեամբ միջոցներ է մտածում հեշտացնելու համար այն բանաւորների դաղթելը, որոնք հայրենիքի մէջ պարապմունք չունին: Դաղթող բանաւորներին կառավարութիւնից կը տրուի մինչև անդամ ճանապարհածախս: Ցոյս կայ, որ Գլադստոնը, որը այժմ մեծ ուշադրութեամբ ուսումնասիրում է բանաւորների դրութիւնը, շուտով գործով ցոյց կը տայ իր ուսումնասիրութեան արդիւնքը:

—«Berliner Tageblatt» լրագրի ասելով, Բ. Դուռը դիմեց պետութիւններին մի շրջաբերականով, որի մէջ յայտարարում է, թէ վճռել է տաճկա-բոլգարական դաշնագրից հանելու այն յօդուածը, որի զօրութեամբ Բոլգարիան պատրաստվում էր օգնել իր զօրքով Ցաճկաստանին պատերազմի ժամանակ: Ընդ սմին Բ. Դուռը խնդրում է պետութիւններին որքան կարելի է շուտով հաստատել յիշեալ դաշնագիրը կոնֆերենցիայի միջոցաւ: Բոլոր պետութիւնները, բացի Ռուսաստանից, յայտնեցին իրանց համաձայնութիւնը հաստատելու դաշնագիրը այդ նոր ձևով:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ԿԱՒՐՕ, 24 փետրվարի: Անգլիական կառավարութիւնը յանձնարարել է Դրիսմընդ Ուօլֆին՝ առաջարկել Վաղեդալիքը Իբրև Եգիպտոսի սահման և այնտեղ գտնվող անգլիական զօրքերը փոխարինել եգիպտական զօրքերով: Դոնգօլի վերատին դրաւելու հարցը յետաձգված է:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 փետրվարի: Հրատարակված է արդէն Բաթումի գրամի, որով թոյլատրվում է կտրել տալ արծաթեայ դրամներ 6,000,000 ռուբլ գումարի: Զինուորա-տեղագրական եղած ուսումնարանների փոխանակ հիմնվում է մի հատ զինուորա—տեղագրական ուսումնարան: Լիֆլանդիայի աւետարանական, լութերական ծխական և վիճակային ուսումնարանները, Էստլանդիայի և Կուրլանդիայի աւետարանական-լութերական գիւղական-ժողովրդական ուսումնարանները նմանապէս և վերոյիշեալ երեք նահանգների վարժապետական սեմինարիաները ենթարկված են ազգային նախարարութեան վերահսկողութեանը:

Կ. ՊՕԼԻՍ, 25 փետրվարի: Պետութիւնների մեծ մասը նպաստաւոր կերպով պատասխանեցին Բ. Դրան շրջաբերականին Թուրք-բոլգարական համաձայնութեան վերաբերութեամբ, նոյնպիսի պատասխանին սպասում են և մնացած պետութիւններից: Դեսպանաժողովը, ինչպէս երևում է, տեղի կունենայ եկող շաբաթ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 փետրվարի: Սենատը քննելով այսօր Ալէքսանդրապոլի գաւառի հաշտարար դատաւորի օգնական Զարտօրիժսկու գործը, որը մեղադրվում էր քննութեանը իր ժամանակին ձեռնամուխ չը լինելու և Ալէքսանդրապոլի գաւառապետին գրաւոր կերպով վիրաւորելու մէջ, ոչնչացրեց Թիֆլիսի դատաստանական պալատի վճիռը՝ Զարտօրիժսկուն յանդիմանութիւն անելու և արդարացրեց նրան: Ելիսաւետպոլի դաւառապետի օգնական Միրզօեվի բողոքարկի համեմատ, Թիֆլիսի դատաստանական պալատի վճռի դէմ, որով Միրզօեվ դատապարտվում է մի բանտարկեալին ծեծելու պատճառով՝ պաշտօնազուրկ լինելուն, Սենատը փոխեց պալատի վճիռը և յանդիմանութիւն յայտնեց Միրզօեվին:

ՎԻԵՆՆԱ, 25 փետրվարի: Այստեղի հայ գաղթականութիւնը ներկայացրեց կոմս Կալնոկիին մի աղերսագիր, խնդրելով բոլոր պետութիւնների միջամտութիւնը Հայաստանում բարենորոգումներ իրագործելու համար յօգուտ հայերի:

ԼՕՆԴՕՆ, 25 փետրվարի: Լուրերին նայելով, նոր կազմվող իրլանդական պարլամենտը կը դրաղվի տեղայնա-գործերով. իսկ ընդհանուր գործերի քննութեան համար կուղարկի լիազօր ներկայացուցիչներ անդլիական պարլամենտը:

ԲԵՐԼԻՆ, 25 փետրվարի: Իշխան Բիսմարկը բաւական ծանր կերպով հիւանդ է, նեղվում է խիստ ըէվմատիզմով:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ

Փետրվարի 25-ին

Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ	$24^{9}/_{32}$	սկնս
— — Համբուրգի վրա —	$205^{3}/_{4}$	պֆ.
— — Փարիզի վրա —	$254^{7}/_{8}$	սան.
Ոսկի — արժէ — —	8 ր. 9	կ.
Մաքսային կուպօններ — . . .	8 › 8	›
Այծաթ — — — . . .	1 › 27	›
Բօրսային դիսկօնտներ — . . .	$4^{1}/_{2}$ և $6^{0}/_{0}$	
Պետակ. բանկ. $5^{0}/_{0}$ տոմս 1-ին չրջանի	100 — 62	կ.
— — — — 2-րդ —	100 › 62	›
— — — — 3-րդ —	$100^{1}/_{4}$ ր.	
— — — — 4-րդ —	$100^{1}/_{4}$ ր.	
— — — — 5-րդ —	100 ր. 37	›
Արևելեան $5^{0}/_{0}$ փոխառութ. 1-ին չրջ.	101 › 12	›
— — 2-րդ —	101 › 37	›
— — 3-րդ —	101 › 87	›
Ներքին $5^{0}/_{0}$ առաջին փոխառութ.	240 › —	›
— երկրորդ —	230 › —	›
$5^{1}/_{2}{}^{0}/_{0}$ րէնտա	$104^{1}/_{2}$ ր.	
Ոսկեայ րէնտա.	$181^{1}/_{2}$ ր.	
Նոր կոնսոլիդած փոխառութիւն. .	154 › 87	›
$5^{0}/_{0}$ դրաւական թղթեր կալուած.		
փոխ. կրեդ. ընկ.	$152^{1}/_{2}$ ր. —	»
$5^{1}/_{2}{}^{0}/_{0}$ դրաւական թղթեր խերսոնի կալուած. բանկի.	$96^{1}/_{4}$ ր.	
$6^{0}/_{0}$ դրաւակ. թղ. խարկովի կալ. բան.	100 ր. 75	›
— — Պոլտավայի — —	101 › —	›
— — Պետ.Տօլսկ. — —	101 › —	›
— — Կիևվի — —	101 › —	›
— — Մոսկվայի — —	101 › 25	›
— — Բեսարաբ. Տավր. —	100 › 25	›
— — Նիժ. Սամար. —	101 › —	›
— — Վիլնայի —	100 › 50	›
— — Թիֆլիսի—27 և 43 տ.	94 › 75	›
— —Քութայիսի-18 և 43 տ.	94 › —	›
Վոլժսկո-Կամսկի բանկի ակցիաները	510 › —	›
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	257 › —	›
Ռիբինսկ-Վոլոգովի ընկ.	$84^{1}/_{2}$ ր. —	›
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ.	92 › 62	›
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ .	92 › 87	›
Օդէսայի — — .	94 › —	›

Ս. Պետերբուրգի բօրսայի սրամադրութիւնը բաւական ամուր է:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ԵՐԵՒԱՆ, Բանաւոր: Շատ շնորհակալ ենք ձեր յօդուածների համար:

ԵՐԵՒԱՆ, Ս. Դ. Ձեր յօդուածը փաստաբաններին մասին կը տպագրենք:

ՇՈՒՇԻ, Լէօ. Ձեր վէպը «Բարակ մանող» ամբողջութեամբ դեռ ես չենք կարդացել: Որքան կարդացինք, վատ չէ երևում: Կը կարդանք այս օրերս մինչև վերջը և կը պատասխանենք: Թեթև մատենախօսական նկատողութիւններ մեծ ուրախութեամբ կը տպագրենք:

ԹԻՖԼԻՍ, Ս. Ա. Բանասիրականի համար ձեր առաջարկած յօդուածի վերնագիրը շատ հետաքրքիր է: Յօդուածն էլ կարող է շատ հետաքրքիր լինել, եթէ դուք նրան կը գրէք որպէս անկողմնապահ իրաւարան, սառն դատողութեամբ:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Յայտնում է ընդհանուր զիտութեանը, որ մարտի 8-ին ներկայ թվի, ժամը 12-ին, վարչութեան բնակարանում, կը կատարվի աճուրդ կապալով տալու քաղաքից անմաքրութիւնները դուրս տանելու համար: Ցանկացողները աճուրդին մասնակցելու կարող են ծանօթանալ կօնդիցիաների հետ Ուղղավայի դիւանատան մէջ, ամեն օր առաւօտեան 9 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ, բացի կիրակի և տօն օրերից:

2—3.

ԵՂԲԱՐՑ ԾՈՎԵԱՆՈՎՆԵՐԻ ԵՒ ԸՆԿ.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ

ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

Սիօնակի փողոց, Անանովի քարավանսարայում:

Վաճառում է վիճակահանութեան տոմսակներ երկրորդ փոխառութեան Պետերբուրգի Կուրսով մինչև մարտի 1-ը

Ապահովացնում է վիճակահանութեան տոմսակները 50 կոպ. հատ. 10 տոմսակներից աւելին—45 կոպ. հատը. 20 տոմսակներից աւելին—40 կոպ. հատը:

2—3.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՊԱՏՍՊԱՐԱԳՈՒՅՆ

ԳԻՆԸ 20 ԿՈՊԵԿ

ԴԱՍԱԳԻՐՔ ԻՆՔՆԱՈՒՍՈՒՑԻՉ

ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒԻ

Լ. ԽԱՆԱՂԵԱՆՑԻ

Ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ կենտրօնական գրավաճառանոցում և էջմիածնում հեղինակի մօտ:

3—3

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ վաճառականական դասակարգին պատկանող իւրաքանչիւր անձի համար ու ՄԱՏՉԵԼԻ ՁԵՌՆԱՐԿ առևտրական հաշուարարութիւնները առանց ուսուցչի օգնութեանը ուսումնասիրելու համար:

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ՁԵՌՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇՈՒԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Վաճառվում է կենտ. գրավաճառանոցում, եղբարց Ծովհանօվների բանկային դրասենեակում և հեղինակի մօտ. Тифлисъ, Лабораторная, № 11: Օտարաքաղաքացիք դիմում են վերջին հասցէով С. П. Мануэльянцу.

Գինն է ամեն տեղ 2 ռուբլի:

4—30

ԹՈՅԼՏՈՒՈՒԹԵԱՄԲ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Էլէկսիր-Melange. Մաղերի արագ և առատ բուսացնելու համար և նրանց պահպանելու թափվելուց: Գինը 2 ր. սրուակի համար, գործածութեան հրահանգի հետ միասին, ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով:

Բալզամ—Eugénie. դափնեայ և պսակի փունջի ծաղիկներից, երեսին, շլինքին և ձեռքերին քնքշութիւն և փափկութիւն, նոյնպէս և մարմարիօնի սպիտակութիւն տալու համար, շուշանի և վարդի անուշահոտութեամբ, նոյնպէս կաչու անհարթութիւնը և բիծերը ոչնչացնելու: Գինը 1 ր. 75 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով:

Կարմրադեղ—Eugénie. հեղուկ, թուշերին և ականջներին բնական վարդի գոյն տալու, որ չէ փոխվում էլէկտրական լուսաւորութեան ժամանակ և որ չէ սրբվում երեսի քրտինքից: Առաջարկվում է մանաւանդ թատրոնների և պարահանդէսների համար: Գինը 1 ր. 50 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով:

Այդ բոլոր երեք կօսմէտիական արդիւնքները բժշկական վարչութեան վկայութեամբ, չեն պարունակում իրանց մէջ որ և է վնասակար նիւթեր:

Բերթա Ռիս.

ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆ ՍՏԱՑԱԾ ՊՕՄԱԴ

իսկական «Pasta Eugénie», գերազանց միջոց կաչու ամեն տեսակ բծերի, և երեսի վրա պատահող ուրիշ անախորժ երևոյթների դէմ: Տալիս է երեսի գոյնին երիտասարդական թարմութիւն և գեղեցկութիւն: Գինը մի սրուակի համար 1 ր. 60 կ.

Քինին-գլիցերինեան պօմադ պերուական բալզամից, մաղերը սնդացնելու, խատցնելու և մեծացնելու համար: Գ. 2 ր. սրուակի համար:

Ձեռքերի պօմադ: Գինը սրուակի համար 1 ր. 30 կ.: Իւրաքանչիւր սրուակի վրա գտնվում է պաշտպանողական դրոշմ, մի «հրեշտակ» և հնարող ստորագրութիւն «Bertha Ries».

Իսկական «Poudre-Eugenie» սպիտակ և վարդագոյն փոշի. Գ. արկղիկի, վրձինով 1 ր. 50 կ., առանց վրձինի 1 ր. 20 կ.

Մաղերի ներկը երեք գոյնի. սև, չադանակագոյն և բաց-չէկ. Գ. արկղիկի 3 ր. Ներկը «Բիսմարկի» գործարանի:

Գլխաւոր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում Վ. Գրիվնակի դեղատան ապրանքների մագազինում, «Լոնդոն» հուրանոցի տակ, Զուբալովի տանը:

10—100.

Дозволено цензурою, Тифлисъ 26-го Февраля 1886 года. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовская у., д. кая.